№ 214 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 **1898** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 № 214

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ **1899** ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-ՐԴ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղդասայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ»; իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուսաստան և Թիւրքիա. Փոքրիկների դաշնակցութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումները Բագում. Նամակ Զանգեզուրի գաւառից. Նամակ Դարաչիչագից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բելը և Լեման գիտնականների գիւտերը։ Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թռուցիկ տեսութիւն։

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐՔԻԱ

—

Կ. Պօլսից գրում են «Новости» լրագրին. «Օսմանեան շրջաններում շատ գոհ են մնացել Թուրխան փաշայի միսսիայով և անա ինչ պատճառով. Ռուսաց դեսպան Զինովիէվ, Կ. Պօլսից մեկնելուց առաջ, յանձնեց Բ. Դռան մի ծանուցագիր, որով պահանջում է ըէֆօրմներ մտցնել Մակեդոնիայի երեք վիլայէթներում և ասիական այն նահանգներում, ուր տեղի ունեցան հայկական խառնակութիւնները։ Ռուսաստանի այդ դիպլոմատիական քայլն այնքան աղդեց օսմանեան պետական գործիչների վրա, որ նրանք երկիւղ կրեցին, թէ չը լինի Ռուսաստանը սկսի նեղացնել Թիւրքիային և նոր պահանջներ անել։ Սակայն Թուրխան փաշան, վերադառնալով Լիվադիայից, շատ հանգստացուցիչ տեղեկութիւններ բերեց։ Ռուսաստանը յայտնել է, որ ըէֆօրմներ մտցնելը օգտակար է ոչ միայն ընդհանուր խաղաղութեան, այլ և իրան՝ Թիւրքիայի համար։ Մինչև այժմ Ռուսաստանը երաշխաւորում էր Թիւրքիային խաղաղութեան պահպանումը Բալկանեան թերակղզու վրա, բայց նա գտնում է, որ Թիւրքիան ևս պարտաւոր է, իր կողմից մի բան անել այդ ուղղութեամբ, որպէս զի արժանանայ Ռուսաստանի հոգածութեան և թեթևացնի նրա բարոյական բեռն ու պատասխանատուութիւը Բալկանեան աղգերի վերաբերմամբ. հակառակ դէպքում, այդ աղգերի համար բոլորովին անհասկանալի կը լինի Ռուսաստանի ստիպողական խաղաղ քաղաքականութիւնը։

«Այդ ըէֆօրմները ոչ միայն լաւ դրութիւն կը ստեղծեն քրիստոնեայ աղգաբնակութեան համար, այլ և կը գոհացնեն մահմեդականներին, որոնք նոյնպէս տանջվում են վարչութեան վատ կազմութիւնից։ Ռուսաստանն ի նկատի ունի ընդհանուր դրութեան բարւոքումը Թիւրքիայում և վերջինս անկանոն և ի վնաս իր սեփական շահերի վարված կը լինի, եթէ չը հետևի Ռուսաստանի խորհուրդներին, որը ի նկատի ունի միայն Թիւրքիայի օգուտը և օսմանեան կայսրութեան պահպանութիւնը»։

Ապա թղթակիցը յայտնում է, որ Թուրխան փաշային յայտնել են, թէ Ռուսաստանը պէտք է այսուհետև կարծիք կազմի Թիւրքիայի մասին ոչ թէ նրա խօսքերի հիման վրա և յոյս ունի, որ օսմանեան կառավարութիւնը կը հասկանայ, թէ նրա սեփական օգուտն է պահպանել լաւ յարաբերութիւններ Ռուսաստանի հետ։ Մնում է այժմ միայն սպասել,—շարունակում է թղթակիցը—թէ ինչպէս օգուտ կը քաղի Թիւրքիան Ռուսաստանի այդ խորհուրդներից և առհասարակ, կը ցանկանայ նա հետևել այդ խորհուրդներին։

Դժուար, թէ Թիւրքան հետևի Ռուսաստանի այդ բարի խորհուրդներին, որովհետև, ինչպէս յայտնում է և «Новости» լրագրի թղթակիցը, սուլթանն այժմ զբաղված է, Վիլհէլմ կայսրի խորհրդի համաձայն, Թիւրքական հեծելազօրքի վերակազմութեամբ։ Մտադրութիւն կայ 20,000-ով աւելացնել հեծելազօրքի թիւը։ Միւս կողմից «С. Петерб. Вѣдомости»-ի թղթակիցը Կ. Պօլսից հաղորդում է, որ ոչ մի ժամանակ թիւրքերն այնպէս զրգռված չեն եղել դեսպանների դէմ, ինչպէս այժմ և նրանց այդ ֆանատիկոսական տրամադրութիւնից սաստիկ մեծ երկիւղ են կրում հայերը, որոնք արդէն մի քանի անդամ այդ ֆանատիկոսութեան զոհ են դարձել։ Այդ երկիւղը մեծ է մանաւանդ այժմ, երբ Բիթլիսում մի քանի հայեր, վէճի բռնվելով մի նշանաւոր չէյխի որդու հետ, սպանեցին երիտասարդ մահմեդականին։ Այդ հանգամանքն առիթ տուեց արդէն կոտորածի. սպանվածների թիւը պաշտօնական տեղեկութիւնները 20 են հաշվում, բայց զոհերի թիւը, անկասկած, երկու-երեք անդամ աւելի մեծ է։ Մահմեդականներին մանաւանդ շատ յուզում է այն լուրը, թէ ռուսաց դեսպանի պահանջմամբ, Կովկաս փախած թիւրքահայերը թոյլտուութիւն են ստացել վերադառնալ և պէտք է վերահաստատվեն իրանց գիւղերում... Ի հարկէ, ասում է թղթակիցը, վերադարձող հայերը կը պահանջեն վերադարձնել իրանց գոյքը, տները, որ քիւրդերը յափշտակել են. վերջիններս կը դիմադրեն և այդ բոլորը կը վերջանայ նոր կոտորածով։

ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Երբ ուժեղը դաւանանք է դարձնում՝ թէ իրաւունքը միայն իրան է պատկանում, ինչ պիտի անէ թոյլը։ Պիտի որոնէ իր նման թոյլերին, միացնէ նրանց և այդպիսով առաջ բերէ մի հաւաքական ոյժ։ Այդպէս էլ ուզում են անել եւրօպացի մի քանի մտածողներ։ Նորվեգիացի յայտնի գրող Բիէրնստիերնէ-Բիէրնսօն նորերում տեսակցութիւն է ունեցել անգլիացի յայտնի հրապարակախօս Ստէդի հետ և ծանօթացրել է նրան փոքրիկ պետութիւններից դաշնակցութիւն կազմելու մի ծրագրի հետ։ Ահա թէ ինչ փաստեր կան այդ ծրագրի օգտին։ Բէլգիան ունի աղգաբնակութիւն 6 միլիոն, Դանիան—2 միլիոն, Հոլլանդիան—5 միլիոն, Պորտուգալիան—4 միլիոն 700 հազար, Շվէյցիան—5 միլիոն, Նորվեգիան—2 միլիոն, Շվէյցարիան—3 միլիոն։ Ընդամենը, ուրեմն 27 միլիոն 700 հազար մարդ։ Խաղաղ ժամանակ այդ երկիրները ունեն զօրք 175,000։ Ահա մի ոյժ, որին արհամարհել չեն կարող մեծ պետութիւնները։ Դեռ այդ ցուցակի մէջ չը կայ Բալկանեան պետութիւնները, որոնք չահասիրական և եսասէր ձգտումներ շատ ունեն, հետևաբար և անկարելի է որ խաղաղասիրական նպատակով կազմվող դաշնակցութեան մէջ մտնեն։ Եթէ չը լինի այդ, փոքրիկների ընկերութեան կաւելանային նաև՝ Բոլգարիան, որ ունի 3 միլիոն 300 հազար հոգի, Սերբիան—2 միլիոն 300 հազար, Զերնօգորիան—230 հազար, Յունաստանը—2½ միլիոն, Ռումինիան—5½ միլիոն։ Այդ ժամանակ բոլոր մանր պետութիւնների աղգաբնակութիւնը միասին կը լինէր 41 միլիոն, իսկ նրանց զօրքերի թիւը խաղաղ ժամանակ—320 հազար հոգի։

Դաշնակցութիւնը, ինչպէս ասացինք, լոկ խաղաղասիրական նպատակ պիտի ունենայ։ Նա իր ոյժերով հաւասար կը լինէր եւրօպական մի մեծ պետութեան և կը թելադրէր իր պահանջներն էլ։ Բացի դրանից, խմբվելով միասին, մանր պետութիւններից իւրաքանչիւրը առանձին-առանձին չէր ներկայացնի մեծերի համար մի հաստատ պատառ, որին տիրանալու համար մեծերի թընդանօթները ամեն րոպէ պատրաստ են գոռալ։ Հարց է միայն. փոքրիկները երբէ՞ն են տեսնում, թէ ունեն իրանց առաջ այդ միտքը իրագործելու հաստատ միջոցներ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳԻՈՒՄ

—

Բաւական երկար, ստիպված ընդհատումից յետոյ, շարունակում ենք մեր զեկուցումները հայոց ներկայացումների մասին։ Շաբաթ, նոյեմբերի 14-ին, խաղում էին Պօտէխինի «Հոգով աղքատներ» դրամայի, թարգմանութիւն Ս. Հախումեանի։ Պօտէխինի պիէսը դրամատիական գեղարուեստի հանելուկներից մէկն է, որոնք, չը նայելով իրանց ներքին այլանդակութեան, շարունակում են մնալ բէպէրտուարի մէջ։ Ինչպէս չը կան այս պիէսի մէջ. չփոթութիւն սիւժէտների, նոյն իսկ դրամաների. մի դրամա, այս-

Պարիզի ուսանողութիւնը այս տարի փորձեց վերականգնել էշերի և գժերի տօնախմբութիւնը, որ մի ժամանակ, միջին դարերում, կաթոլիկ Ֆրանսիան հանդիսաւոր կերպով տօնում էր եկեղեցիներում։

Բայց առաջ պատմեմ ձեզ էշերի և գժերի տօնը։ Միջին դարերում և նոյն իսկ 15, 16-րդ դարում, հարաւային Եւրօպայի կաթոլիկ ժողովուրդները սովորութիւն ունէին մի քանի տարօրինակ տօնախմբութիւններ կամ միստէրիաներ կատարել եկեղեցիներում. այդ կողմից շատ նշանաւոր էր Ֆրանսիան. էշերի և գժերի տօններ, այստեղ կատարվում էին ամենամեծ հանդէսով։ Գժերի տօնը կատարվում էր Պարիզում, «Notre Dame de Paris» հռչակաւոր մայր տաճարի մէջ։ Այդ տօնախմբութեան հրաշալի նկարագրութիւնը թողել է մեզ Վիկտոր Հիւգոն իր հռչակաւոր համանուն հեղինակութեան մէջ։ Էշերի տօնախմբութիւնը մեծ շուքով տեղի էր ունենում Բօվէյում, ամեն տարի յունվարի 14-ին։ Այդ տօնը կատարվում էր Քրիստոսի Եգիպտոս փախչելու յիշատակին և որովհետև այդ դէպքի մէջ դեր է խաղում և էշը, այդ պատճառով էշը ևս, իբրև դերակատար, հանդէս էր դուրս բերվում տօնախմբութեան մէջ։ Եգիպտոս փախչելու տեսարանը ներկայացնելու համար, ընտրում էին մի գեղեցիկ, պարկեշտ և անարատ կոյս աղջիկ. նրան նստացնում էին շքեղ կերպով զարդարված էշի վրա։ Աղջիկը գրկած ունէր մի մանուկ, երբեմն և խրձիկ, անա այդ խումբը ներկայացնում էր Աստուածածինը Փրկչի հետ։ Հանդէսն սկսվում էր քաղաքի մայր-եկեղեցուց. այդտեղ կոյսին նստեցնում էին էշի վրա և հանդիսաւոր եկեղեցական թափօրով գնում էին ս. Ստեփաննոսի եկեղեցին։ Էշին այդտեղ դիմաւորում էր ամբողջ հոգևորականութիւնը զգեստաւորված, իսկ ու խաչվառով, ծնկաչոք ու երգեցողութեամբ և առաջնորդում էր մինչև դասը։ Ապա սկսվում էր պատարագը, մի առանձին, հանդիսաւոր և տարօրինակ պատարագ, որովհետև թէ սեղանից և թէ դասից, երգեցիկ խումբը ամեն անդամ «Տէր ողորմեա», «պռօսխումմէ» ասելու փոխարէն, էշի նման զռռում էր։ Երբ պատարագը վերջանում էր, «Օրհնեալ եղերուք» արձակման աղօթքի տեղ, պատարագիչը՝ Աւետարանը և խաչը ձեռքին, երեք անդամ զռռում էր—«խին-խան». ժողովուրդն էլ «Եւ ընդ հոգոյդ քում» ասելու փոխարէն, նոյնպէս զռռում էր. առանձին բարեպաշտութեան նշան էր համարվում, եթէ մէկը կարողանար իր զռռոցով խափանել միւսների ձայնը։ Այդ ժամանակ «Տրանելի» էշը ևս, զգալով իր աւանակային արժանապատուութիւնը և հանդէսի կարևորութիւնը, կամենալով սովորեցրել, թէ ինչպէս պէտք է զռռալ, սկսում էր թնդացնել տաճարի կամարները իր «խին-խանով» և խլացնում էր կղերի ու ժողովրդի բարեպաշտական աղաղակները։

Մի քանի քաղաքներում գժերի և էշերի տօնախմբութիւնը մի օր էին կատարում։ Առաջ եկեղեցիներում սկսում էին շարականներ երգել ի պատիւ Փրկչի, ապա աղօթքներ էին կարդում ս. Կոյսին, բայց այնպիսի ոտանաւորներ էին արտասանում էշի վրա նստած կոյսի առաջ, որ այժմ մեզ միանդամայն անհաւատալի է թվում, թէ ինչպէս կարող էին այդպիսի խօսքեր արտասանվել տաճարներում...։

Եւ անա, XX-րդ դարի շէմքում, Պարիզում, ուսանողութիւնը վերականգնում է այդ աւանակային տօները։ Այդ էլ, ի հարկէ, մեծ առաջադիմութիւն է... դէպի յետ, դէպի միջին դարերի խաւարը...։

—

Մտածում եմ, ինչ գեղեցիկ բան կը լինէր, եթէ էվոլիւցիօնիստների այդ թէօրիան, բարձրանալու և իջնելու թէօրիան, իրագործվէր և հարուստների ու աղքատների վերաբերմամբ։ Միլիոնատէրերը հասնէին հարստութեան մի այնպիսի սահմանի, որից դէնը այլ ևս անկարելի լինէր հարստանալ և յետոյ սկսէին յետ դառնալ մինչև հասնէին կատարեալ աղքատութեան,

այն Թիւրքիայի օգուտը և օսմանեան կայսրութեան պահպանութիւնը»։

Ապա թղթակիցը յայտնում է, որ Թուրխան փաշային յայտնել են, թէ Ռուսաստանը պէտք է այսուհետև կարծիք կազմի Թիւրքիայի մասին ոչ թէ նրա խօսքերի հիման վրա և յոյս ունի, որ օսմանեան կառավարութիւնը կը հասկանայ, թէ նրա սեփական օգուտն է պահպանել լաւ յարաբերութիւններ Ռուսաստանի հետ։ Մնում է այժմ միայն սպասել,—շարունակում է թղթակիցը—թէ ինչպէս օգուտ կը քաղի Թիւրքիան Ռուսաստանի այդ խորհուրդներից և առհասարակ, կը ցանկանայ նա հետևել այդ խորհուրդներին։

Դժուար, թէ Թիւրքան հետևի Ռուսաստանի այդ բարի խորհուրդներին, որովհետև, ինչպէս յայտնում է և «Новости» լրագրի թղթակիցը, սուլթանն այժմ զբաղված է, Վիլհէլմ կայսրի խորհրդի համաձայն, Թիւրքական հեծելազօրքի վերակազմութեամբ։ Մտադրութիւն կայ 20,000-ով աւելացնել հեծելազօրքի թիւը։ Միւս կողմից «С. Петерб. Вѣдомости»-ի թղթակիցը Կ. Պօլսից հաղորդում է, որ ոչ մի ժամանակ թիւրքերն այնպէս զրգռված չեն եղել դեսպանների դէմ, ինչպէս այժմ և նրանց այդ ֆանատիկոսական տրամադրութիւնից սաստիկ մեծ երկիւղ են կրում հայերը, որոնք արդէն մի քանի անդամ այդ ֆանատիկոսութեան զոհ են դարձել։ Այդ երկիւղը մեծ է մանաւանդ այժմ, երբ Բիթլիսում մի քանի հայեր, վէճի բռնվելով մի նշանաւոր չէյխի որդու հետ, սպանեցին երիտասարդ մահմեդականին։ Այդ հանգամանքն առիթ տուեց արդէն կոտորածի. սպանվածների թիւը պաշտօնական տեղեկութիւնները 20 են հաշվում, բայց զոհերի թիւը, անկասկած, երկու-երեք անդամ աւելի մեծ է։ Մահմեդականներին մանաւանդ շատ յուզում է այն լուրը, թէ ռուսաց դեսպանի պահանջմամբ, Կովկաս փախած թիւրքահայերը թոյլտուութիւն են ստացել վերադառնալ և պէտք է վերահաստատվեն իրանց գիւղերում... Ի հարկէ, ասում է թղթակիցը, վերադարձող հայերը կը պահանջեն վերադարձնել իրանց գոյքը, տները, որ քիւրդերը յափշտակել են. վերջիններս կը դիմադրեն և այդ բոլորը կը վերջանայ նոր կոտորածով։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՌՈՒՑԻԿ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Ամեն բան, որ ենթակայ է բնութեան մէջ յաջորդական զարգացման կամ էվոլիւցիայի օրէնքին,—ասում են գիտնականները—ունի իր սահմանը։ Այդ հիման վրա, ընթերցող, չը գիտես ո՞ր գիտնականը կամ գիտնականները այն կարծիքն են յայտնում, թէ քաղաքակրթութիւնը, լուսաւորութիւնը ևս իր սահմանը պէտք է ունենայ. քաղաքակրթութեան շաւղի մէջ մի ազգ, հասնելով քաղաքակրթական զարգացման գագաթնակէտին, պէտք է յետ դառնայ իր կըրունկի վրա և յաջորդական աստիճաններով հասնի իր նախնական վիճակին, այսինքն նահապետականութեան, վայրենութեան։ Ձիշդ է թէ ոչ այդ կարծիքը, այդ իմ գիտնալու գործը չէ, ես գիտնական չեմ, բայց ես կարող եմ ասել, որ այս տարի ֆրանսիական ազգի ինտելլիգենտ մասը—ուսանողութիւնը մի այնպիսի գործ կատարեց, որ ուղղակի ցոյց է տալիս, թէ այդ կարծիքը շատ էլ հեռու չէ ճշմարտութիւնից։ Կը հաւատաք ընթերցող, եթէ ասեմ ձեզ, որ

պէս ասած, հագցրած է միւսի մէջ, մի սիւժէտ՝ միւսի մէջ։ Իսկ ինքնուրոյնութեան տեսակէտից յիշեցնում է հին առակը—ինչպէս ագռաւը ըզգեստաւորված սիրամարգի փետուրներով հրապարակ է դուրս եկած եղել։ Պօտէխին մինչև անդամ աւելի պարզ է վարվել. նա Դիւմա-Որդու յայտնի պիէսից ուղղակի վերցրել է թէ սիւժէտը և թէ հերոսուհուն, եթէ մեզմ լինելու համար ուրիշ բառ գործ չածենք, և այդ թէ հին և թէ վառ խնդիրը (դեռ Ասպազիայի ժամանակից) փորձել է արծարծել ռուս իրականութեան մէջ, և ինչպէս ասում են՝ тутъ то сломалъ себѣ ногу։ Նա չէ ըմբռնել Դիւմայի երկի միտքը, ինչպէս հարկն է, և մի և նոյն ժամանակ խախտել է դեղարուեստի հիմնական կանոնը, դեռ թողնում ենք պիէսի անդոյնութիւնը՝ հոգեբանական տեսակէտից։ Դիւմա իր դրամայում ուզում է ցոյց տալ, թէ որ աստիճանի ճակատագրական և աւերիչ ազդեցութիւն ունի տիրապետող ձևական հասարակական աշխարհայեացքը որոշ կարգի դժբաղդ կանանց վերաբերմամբ, մինչև իսկ այնպիսի դէպքում, երբ չար բաղդի զոհը ինքը բնաւ մեղաւոր չէ իր վիճակի համար, տոգորված է լաւագոյն ղդացմունքներով և մաքուր կեանքի տենչանքներով։ Բաւական է, որ նա խախտել է հասարակական օրէնքը բացարձակ, չը կայ նրա համար փրկութիւն, չը կայ այլ ևս վերադարձ, թէկուզ նրան դատապարտողներից շատ շատերը, ծածկված օրինական կարգերի տակ, աւելի մեղանչած և աւելի անբարոյական լինեն։ Անձնաւորութիւնները անողոք են ճակատագրական անողոք օրէնքի դէմ և Դիւմայի հերոսուհին, լաւագոյն ղդացմունքներից դրդված, որոշում է չը զոհել մի ընտանիքի պատիւն իր անձնական երջանկութեանը։ Եւ դեռ հարց էլ է՝ օրինական ամուսնութիւնը կը տար նրան ցանկալի երջանկութիւնը, իսկ հասարակութիւնը կը ներէր նրա անցեալը։ Պօտէխին վերցնելով նոյն սիւժէտը, նոյն հերոսուհուն, մի քայլ առաջ է գնում. նրա հերոսուհին, մի փոքր տատանվելուց յետոյ՝ վճռում է ամուսնանալ իր սիրածի հետ, որը բարձր շրջանից է և ըստ երևոյթին ընաւորութեան և լաւ ղդացմունքների տէր երիտասարդ է։ Ասում ենք՝ ըստ երևոյթին, որովհետև յետոյ մի և նոյն երիտասարդը, որը վերոյիշեալ ընաւորութեամբ անհրաժեշտ է հանդոյցի համար, հեղինակի կամայականութեամբ, դառնում է բոլորովին այլ անձնաւորութիւն։ Խնդիրը, ի հարկէ, չէ վերջանում և չէր էլ կարող վերջանալ. այս դէպքում փոխվում է միայն դրամատիկական վայրկեանը. հասարակութիւնը, ի հարկէ, չի ների հերոսուհուն, նրա անցեալը. մի և նոյն է, նրա երջանկութիւնը պիտի թունաւորվի. փոփոխութիւնը միայն վայրկեանի մէջն է՝ Դիւմայի հերոսուհու դրութեան համեմատութեամբ։ Ահա ինչումն է կեանքի տրագիզմը հեղինակի շօշափած հարցում։ Դրամայի տարրերը և ընթացքը պարզ են։ Բայց Պօտէխին, չատ բարձրից սկսելով, վերջացնում է սկանդալով։ Նրա հերոսուհին ևս դժբաղդանում է. պէտք էր կարծած, թէ նոյն անողոք և անողոքամիտ ֆակտորի—հասարակական կարծիքի—ազդեցութեան տակ։ Բայց ոչ. նրա բաղդի ջանջանողը լինում է իսկապէս մի պարզ երդչուհի, որով դրաւվում է նրա ամուսինը. թէև տրագի-կոմէդիայի վերածված դրաման համեմված է դանդաղներով և գիրգներով հասարակութեան հասցէին։ Առաջին գործողութեան օրինակելի ջենտլմէնը միւս գործողութիւնների մէջ դառնում է դեմ, շռայլ, արբեցող, ընդունակ գրաւելու անամօթական զդացմունքով։ Այսպիսով Պօտէխին չփոթել է երկու դրամատիկական մոտիվները։ Երկրորդ մոտիվի համար հարկաւոր չէր «կամելիա» հերոսուհի. պարզ երդչուհին կարող է դժբաղդացնել և ամենաօրինակելի ու հասարակութեան մէջ դիրք վայելող «մատրօնային»։ Անշուշտ այդ չէ ունեցել իբրև նպատակ իր ներկայ դրամայի համար Պօտէխին և նա երկու մոտիվները չփոթել է միմեանց հետ, անկապ կերպով։ Առանձին զրուելի տպաւորութիւն է գործում դրամայի վերջը, ուր նա ուզում է դերադանցել տրագիզմով Դիւմային, ինքնասպանութիւն գործել տալով իր հերոսուհուն և այն ևս մի տեսարանի մէջ, ուր նա կարծես ուզեցել է մրցել Կսավիէ դը-Մօնտեպէնի հետ։ Ամենից առաջ հերոսուհին անէծքներ է թափում հասարակութեան դլխին՝ նրա անողոքամտութեան համար, մինչդեռ նրա դժբաղդութեան, ամուսնական երջանկութեան կործանման պատճառն իսկապէս պարզ երդչուհին է եղել։ Ի վերջոյ, այս երկը մի հաղարաթերթիկ է միմիայն էֆէկտի համար գրված և այդ կողմից հեղինակը միամիտների աչքում հասնում է իր նպատակին, չնորհիւ իր բեմականութեան։

Թարգմանութիւնը (ոչ փոխադրութիւն) անհասկանալի կերպով համեմված է բազմաթիւ «արմէնիզմներով» և այդ յարաբերութիւնը մի տիպի վերաբերմամբ հասցրած է այլանդակութեան. ռուս Տիտ Տիտիչի որդուն թարգմանիչը խօսեցնում է Արարատեան ժողովրդական բարբառով, տեղ տեղ խառնելով նժոյշներ Ղարաբաղի լեզուից։

Տիկին Սիրանոյշ խաղում էր ոգևորութեամբ, մանաւանդ վերջին գործողութեան մէջ. զուր կորցրած եռանդ՝ անմիտ գործողութեան համար։ Պ. Պետրոսեան իր ամպլուայի չատ յարմար դեր ունէր (Կարաբանօվ), բայց կարծես թէ խաղում էր ակամայից. սառնութիւն, տրամադրութեան բացակայութիւն նկատվում էր և ոչ նրա մէջ միայն. բայց նա իր դերը չը փչացրեց։ Պ. Աբէլեան լաւ էր երիտասարդ Ալէկինի դերում, բայց սովորական ոգևորութիւնը չէր նկատվում նրա մէջ։ Շատ գեղեցիկ խաղում էր պ. Վրոյր Ալէկին հօր դերում. կրկին և կրկին ապացուցեց իր կօմիկական տաղանդի նրբութիւնը, բազմակողմանութիւնը և դեղեցկութիւնը։ Օրիորդ Գարագաշեան տիկին Ալէկինայի դերում... Խնայելով օրիորդին, մենք դատապարտում ենք նրանց, որոնք տեղահան են արել նրան և տարագիր դարձրել հեռու երկրից։ Օրիորդի խաղը տրագէդիա էր դրամայի մէջ. էսթէտիկայի տեղ նա ուզղակի ցաւակցութիւն էր զարթեցնում նայողների մէջ։ Վատ չէր լինի, որ նրա հրաւիրողները իրանց դրպանից տուժէին։ Դերասանական ձիրք չունենալը յանցանք չէ. առանց վիրաւորելու ցանկութեան նշոյլի անդամ պիտի յայտնենք, որ օրիորդը իբրև դերասանուհի կեղծ դրութեան մէջ է։ Մի հետաքրքիր երևոյթ է նկատվում. ծառաներից ոմանք խաղում էին իբրև կոմսեր. իսկ դրանցից պ. Մելիք-Յովսէփեանին պիտի նկատենք, որ նրա խաղը ոչինչ չի կորցնի, եթէ նա իր բնութիւնից ուղիղ իրանը չաչխատի միշտ ծռել բեմի վրա։

Ց. Սաղաթելեան

ՆԱՄԱԿ ՋԱՆԴԵՋՈՒՐԻ ԴԱՒԱՌԻՑ

—

Մեղրի, Նոյեմբերի 4-ին

Ներկայումս մեր ժողովրդի ամենակենսական խնդիրներից մէկը կազմում է հացի թանգութիւնը. սաստիկ երաշտութեան պատճառով հացի գինը չափազանց բարձրացել է։ Տարվայ ներկայ ամիսներին հողագործն արդէն սերմը ցանած պրծած է լինում և հացաբոյսերը ծիլերեն արձակած լինում, բայց երկար ամիսների ընթացքում անձրևներ չը գալու պատճառով աշնանացանը մնում է, իսկ ցորենի թանգութեան պատճառով չէ կարողանում ցորեն ձեռք բերել։ Գիւնէյ-մէալի գիւղացին ամեն օր վշտահար հայեացքով, յուսահատ մերթ կապտագոյն անամպ երկնակամարին է նայում, մերթ չորացած երկրին. գոյութեան ամենօրեայ անողոք կռուի խնդիրը կրծում, մաշում է նրա հոգին և խոնարհված ճակատագրի և Նախախնամութեան առաջ, նա հաշտվել է ներկայ հանգամանքների հետ։ Ով փոքր ի չատէ ծանօթ է մեր գիւղացիների կեանքին, նա անշուշտ տեսած կը լինի, որ երբ մի որ և է հասարակական չարիք կամ աղէտ մօտեցնում է մի թշուառ վիճակ, այդպիսի ճգնաժամում անտարբեր, սառնասիրտ են ու մեռած է համայնքը և նրա մէջ ընդհանուր ինքնօգնութեան դաղափարը կորչում է։

Անցեալ տարվայ անբերրիութիւնից առաջացած թանգութեան ժամանակ մեր հասարակութեան մէջ այն միտքը արծարծեցինք, որ անհրաժեշտ է վաղօրօք հասարակական ընդհանուր ոյժով բաւականաչափ ցորեն ձեռք բերել, բայց ժողովուրդը իր անտարբերութեամբ, իր «ոսկի երազներով» ապրեց։ Նոյնը կրկնվեց և այս տարի։ Ամառվայ ամիսներին երբ շրջակայ և այլ հեռաւոր գիւղերի հունձը բաւարար էր և ցորենը վաճառվում էր պուդը 1 ր. 10 կ.—1 ր. 20 կ. կրկին հասարակութիւնը անհոգ վերաբերվեց, յուսալով, որ օրէցօր կիջնի ցորենի գինը։ Բայց զուր յոյս։ Ցորենի գինը օրէցօր սկսեց բարձրանալ մինչև 1 ր. 60 կ.—1 ր. 80 կօպ. և ներկայումս իսկ մեր կշռի տակ ցորեն չեն բերում։ Հասարակութիւնը, աչքի առաջ ունենալով, որ մեծամասնութեան դրութիւնը անելանելի է դառնում, սրանից երեք-չորս չաբաթ առաջ, տանուտէրի նախագահութեամբ, հասարակական ժողով կայացրեց և ընտրելով երեք անձնաւորութիւն, վող տուեց նրանց, որ Երևանից մօտ 1000 պուդ ցորեն բերել տան։ Այդ երեք անձինքներից մէկը ուղևորվեց Օրդուբաթ և այնտեղից բանակցութիւններ էր արել Երևան իր մի ծանօթ վաճառականի հետ։ Վերադառնալով այստեղ, նա յայտնեց ցորենի բաւարար գինը Երևանում և աւելացրեց, որ արդէն ճանապարհվել է ցորենը։ Ժողովուրդն անհամբեր սպասում է ցորենի, բայց ցորեն չը կայ։ Վերջապէս մի քանի անդամ գնալով Օրդուբաթ և վերադառնալով այստեղ, ժողովրդի մէջ լուր տարածվեց, թէ ցորենի գինը բարձրացել է Երևանում և խալվարը 38 ռուբլի է, մինչդեռ առաջին անդամ յայտնել էր թէ ցորենը ճանապարհել են։ Այդպիսի մի գործ յանձնել մի մարդու, որ իր վաճառականի ճարպիկ հմտութիւններով մի անդամ բօժօժի գործում հասարակութեան շահերին ուզում էր վնասել, առնուազը համարում ենք հասարակութեան կողմից անխելքութիւն։

Անմխիթար դրութեան մէջ են թէ մեր գիւղ չքաւոր դասակարգը, թէ չրջակայ գիւղերի հայ և թուրք գիւղացիները։ Թուրք և հայ գիւղացիների ցորենը, որքան իմացանք մեզ հասած տեղեկութիւններից, բաւարար էր և պէտք էր բաւականանար մինչև նոր ցորենի դուրս գալը, բայց ազդաբնակութեան մեծամասնութիւնը մի կողմից խրված լինելով ծանր պարտքերի մէջ, իսկ միւս կողմից փողի հարկաւորութիւն զգալով՝ անտեսական բազմատեսակ պահանջներին լուծում տալու, ստիպված էր վաճառել իր պաչարը և ներկայումս հաստատ առանց ցորենի է, որովհետև մեծ մասն էլ վաչխառուներն են իրանց փողի տեղ խլել։ Մեր գիւղացիներից մի պարոն, որ յայտնի է իր վաչխառուական քաչագործութիւններով և հասարակական զզուանքին է արժանացել, օգտվելով ժողովրդի ծանր դրութիւնից, թուրք գիւղերից մօտ 800 պուդ ցորեն էր բերել և իր տան մէջ վաճառում իր ուզած գնով և դեռ այնքան «բարեխղճութիւն» ունեցաւ, որ նոյն իսկ կշռելու մէջ էլ խաբում էր գնողներին, որոնք մեծ մասամբ այրի կանայք էին։ **

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՉԻՉԱԳԻՑ

—

Նոյեմբերի 20-ին

Այս տարի արտասովոր եղանակներ են լինում ժեղմանում. մինչև այսօր դեռ ևս ձիւն չէ եկել, չը նայած, որ նոյեմբեր ամիսը վերջանալու վրա է, մինչդեռ ուրիշ տարիներում այս ժամանակ Դարաչիչագի շրջանը ծածկված էր լինում խոր ձիւնով։ Միայն սարերի կատարներին տեղ-տեղ նօսր, ալիքաւոր ամպերի նման փայլփլում են ձիւնի նօսր շերտերը... Տեղական կլիմային յատուկ ցրտերը նոյնպէս չը կան։ Մի խօսքով՝ եղանակների և կլիմայի զգալի փոփոխութիւն... Սակայն այդպիսի ծայրայեղ չորայնն եղանակները, ինչպէս շատերը նկատում են, այնքան էլ նպաստաւոր չեն, եթէ չասենք վնասակար, հողագործութեան վերաբերմամբ, որովհետև աշնանը, երբ անձրևներն ըսկսում են քիչ-քիչ տեղալ և փափկացնել տափը, գիւղացիները միջոց են ունենում հերկել իրանց արտերը՝ պատրաստելու եկող գարնանը ցանելու համար։ Բայց այժմ առանց անձրևի վարելը անկարելի է դառնում։

Անցեալ շաբթին ես դիտմամբ դուրս գնացի մօտիկ դաշտը շրջելու. անթառամ դեղին ծաղիկները՝ մահամերձ հիւանդի նման գոյները քիչ սպրդնած՝ տակաւին տարուբերվում էին չորացած արմատի վրա... Ամառվայ սաստիկ չորութիւնից արտերում սարսափելի ճեղքուածներ են գոյացել և վարատեղերի մակերևոյթը այն աստիճան քարացել է, որ առանց անձրևների նոյն իսկ երկաթէ գութաններով անկարելի է վարել։ Եւ այդ պատճառով տեղ-տեղ արտերից շատերը մնում են դարնանը վարելու։ Եղանակների այդպիսի ազդեցութեան տակ ժողովրդի խաւերում զանազան կասկածների տեղիք է տրվում՝ եկող տարվայ հացի արդիւնաբերութեան մասին։

Միխիթարականը միայն այն է, որ այս տարի, բարեբաղդաբար, դաշտային մկներ չը կային հանդերում, ապա թէ ոչ՝ տիրող երաշտութեան հետ միասին վնասվելով նաև մկներից՝ ցանքերը ոչ մի կողմից բաւականութիւն չէին տայ տեղական ազդաբնակութեան կարիքներին։

Այդ հրէշաւոր հարստութեան դէմ յանդիման, մի հրէշաւոր աղքատութիւն է ներկայացնում մեզ Ֆրանսիացի գրող Էմի Զոլա Պարիզի բանւոր դասակարգի մէջ։ Այդ քաղաքում տարեկան 300—350 հոգի անձնասպան են լինում քաղցածութիւնից, մինչ 1876 թ. քաղցից անձնասպան լինողների թիւը հաղիւ հասնում էր 7—8-ի։ Որքան զարգանում է կապիտալիզմը, որքան շատանում են հարուստները, այնքան էլ շատանում է անձնասպանների, սովամահների թիւը։ Ամբողջ ընտանիքներ, հայր, մայր, որդի, աղջիկ, միասին անձնասպան են լինում քաղցածութեան պատճառով։ Դա մի սարսափելի բողոք է ժամանակակից սոցիալական կազմութեան դէմ. դա ցոյց է տալիս, որ ժամանակակից մարդը կորցրել է իր հաւատը դէպի մարդկային արդարութիւնը. դա ցոյց է տալիս, որ մարդը վերադառնում է վայրենութեան վիճակին, երբ թոյլ է տալիս իր նմանին, իր ընկերին, մեռնել սովածութիւնից իր կողքին, միլիոնների և միլիարդների կողքին...

Կը գայ մի օր արդեօք, երբ երկնքում հրեշտակը խփի թմբուկը հողևորականների և հարուստների համար...։ Կասկածում եմ։

Տ.

իսկ աղքատները, հասնելով չքաւորութեան սանդուխքի վերջին աստիճանին, յետ դառնային դէպի հարստութեան սանդուխքը և դրաւէին հարուստների տեղը։ Դժբախտարար, ի մեծ ամօթ զիտնականների, այդ թէօրիան բոլորովին ծուռ կերպով է իրականանում։ Ամերիկայում, կրեսոսները, օրինակ, Ռօկֆելլէր և Աստոր միլիարդատէրերը չարունակ բարձրանում են հարստութեան աստիճաններով և նրանց առաջ ոչ մի սահման չը կայ, ամենևի չեն էլ մտածում յետ դառնալ. իսկ Պարիզում, Լօնդոնում բանւորները հասնում են աղքատութեան այնպիսի դազաթնակէտին, որից դէնը դերեզմանն է. նրանք սովամահ կամ անձնասպան են լինում, և ինչպէս ասում են մեր սրբազան հայրերը՝ հարստութիւնը դանում են հանդերձեալ աշխարհում, մի բան, որի մասին ես սաստիկ կասկածում եմ, որովհետև դժուար թէ աղքատների երեսին հանդերձեալ աշխարհում նայեն առանց անցագրի, իսկ չէ՞ որ սրբազան հայրերը, որոնց ձեռքումն է դտնվում հանդերձեալ աշխարհի բանալին, սովոր չեն աղքատներին «պարտուպատշաճ» անցագիր տալ...։

Ճշմարիտ որ աշխարհի բաները զարմանալի են։ Ամեն բան սահման ունի, բայց ագահութիւնը երբէք սահման չէ ճանաչում։ Ահա ձեզ ամերիկական կրեսոս Ռօկֆելլէր. նրա հարստութիւնը հասնում է 200 միլիոն դօլլարի. տարեկան եկամուտ ունի 12 միլիոն դօլլար, կամ ամեն մի վայրկենում մի ռուբլի։ Ուրեմն այն միջոցին, երբ այդ կրեսոսը մի բաժակ սուրճ է խմում, որ կարող է տեւել 5 րոպէ, նա ստանում է 300 ռուբլի։ Դուք կարծում էք թէ նա, այդպիսի հարստութեամբ, ահագին ցանկութիւններ ունի. նա միայն մի ցանկութիւն ունի—աւելի հարստանալ և դառնալ աշխարհի ոչ թէ չորրորդ, այլ առաջին հարուստը։ Նրա մասնաւոր կեանքը շատ տխուր է. նա զարթնում է առաւօտեան ժամը 7-ին. իսկոյն դալիս է սափրիչը, որին նա վճարում է 15 ցենտ (30 կօպէկ). նրա կարծիքով աւելի վճարել, կը նշանակէ մարդկանց փչացնել. իսկ ինքն այդ մի քառորդ ժամում, որ սափրվում է, իր հարստութեան վրա աւելացնում է 900 ռուբլի։ Դրանից յետոյ նա նախաճաշում է, այն է՝ խմում է մի բաժակ կաթ և ուտում է երկու-երեք հատ դեղնախնձոր։ Ապա իր աղջիկների հետ գնում է մի պտոյտ անելու քաղաքային պարտէզում մինչև ժամը 10-ը, որից յետոյ աղջիկները վերադառնում են տուն ոտքով, իսկ ինքը գնում է դրասենեակ նոյնպէս ոտքով, որովհետև կառք վարձել չռայլութիւն է համարում։ Դրասենեակում նա զբաղվում է մինչև ժամը 4-ը և միլիոններ է աշխատում ու գնում է տուն. այս անդամ նա կառք է վարձում. չէ՞ որ մարդը իր ճակատի դառն քրտինքով է աշխատել իր հացը։ Ժամը 7-ին ճաշում է, իսկ 10-ին պառկում քնելու։

Ինչի համար է նա դիզում այդ հարստութիւնը. ասում են, որ նա երբէք այդպիսի հարց չէ տալիս իրան։

Ահա ձեզ և մի աւելի խոշոր կապիտալիստ—Աստորը։ Նա մի ամբողջ նահանգի տէր է. նրա հարստութիւնը անհամար է. մօտաւորապէս 1,500,000,000 դօլլար են հաշվում։ Բայց նա օր ու գիշեր միայն մի մտածմունք ունի—չատացնել դօլլարները։ Ինչի համար—այդ ինքը ևս չը գիտէ։

Ֆիւրդերը մի առած ունեն. մի անդամ երբ մարդարէն բարձրանում էր երկինք, նա տեսաւ մի հրեշտակ, որի վզից կախ էր ընկած մի մեծ թմբուկ և կոպալները ձեռքին սպասում էր։ Գաբրիէլ հրեշտակապետը յայտնեց, որ նրա պաշտօնն է թմբուկ խփել ամեն անդամ, երբ մի մօլլա կամ մի հարուստ մի բարեգործութիւն կատարի, որպէս զի հրեշտակները լսելով, փառաբանեն նրանց առատաձեռնութիւնը։—Լաւ, հարցրեց մարդարէն, մինչև այժմ, երևի շատ ես թմբակահարել, այնպէս որ ձեռները յոգնել են։

—«Ես ոչ մի անդամ, պատասխանեց հրեշտակը, դեռ սպասում եմ. մօլլաները և հարուստները սովոր չեն տալ, այլ սովոր են միայն ստանալ։ Նրանք չեն գնում նրանց մօտ, ով քիչ ունի, այլ ստիպում են քիչ ունեցողներին իրանց մօտ դալ և այդ քիչն էլ առնելով, ճանապարհ են դնում։»

—

Այդ հրէշաւոր հարստութեան դէմ յանդիման, մի հրէշաւոր աղքատութիւն է ներկայացնում մեզ Ֆրանսիացի գրող Էմի Զոլա Պարիզի բանւոր դասակարգի մէջ։ Այդ քաղաքում տարեկան 300—350 հոգի անձնասպան են լինում քաղցածութիւնից, մինչ 1876 թ. քաղցից անձնասպան լինողների թիւը հաղիւ հասնում էր 7—8-ի։ Որքան զարգանում է կապիտալիզմը, որքան շատանում են հարուստները, այնքան էլ շատանում է անձնասպանների, սովամահների թիւը։ Ամբողջ ընտանիքներ, հայր, մայր, որդի, աղջիկ, միասին անձնասպան են լինում քաղցածութեան պատճառով։ Դա մի սարսափելի բողոք է ժամանակակից սոցիալական կազմութեան դէմ. դա ցոյց է տալիս, որ ժամանակակից մարդը կորցրել է իր հաւատը դէպի մարդկային արդարութիւնը. դա ցոյց է տալիս, որ մարդը վերադառնում է վայրենութեան վիճակին, երբ թոյլ է տալիս իր նմանին, իր ընկերին, մեռնել սովածութիւնից իր կողքին, միլիոնների և միլիարդների կողքին...

Կը գայ մի օր արդեօք, երբ երկնքում հրեշտակը խփի թմբուկը հողևորականների և հարուստների համար...։ Կասկածում եմ։

Տ.

Հայի դինը օրէցօր բարձրանում է. այժմ ցորենի խալվարը 35 ր. է դառել։

Գ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նոյեմբերի 22-ին, կիրակի գիշերը, Բաթումից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Օչէմչիրիի և Սուխումի միջև տեղի ունեցաւ «Պեսոր» և «Եկատերինա» շոգենաւերի ընդհարում։ «Եկատերինա» շոգենաւը խորտակվեց։ Կան սպանվածներ»։

—

Վանից մեզ գրում են. «Այս օրերս դեղջուկ դասակարգը շատ կը նեղուի աղքատութենէ, այնպէս որ Հայոց-Ձորի մի քանի գիւղեր մտադիր են խմբովին կաթոլիկանալու։ Այսպիսեաց թիւն օրէօր աւելնալու վրա է։ Ֆռէռները մըտադիր են ի մօտոյ Համուդ-աղէնց (Ցայնկոյսներու թաղի մէջ հարուստ և միակ թիւրք) տունն առնել 1,200 տաճկական ոսկիի։ Ասոնց համար հայ կաթոլիկ առաջնորդ մ'ալ եկած է՝ հայր Անտոն Ջնդոյեան մչեցի։ Կլոր-դարի թաղեցիք մեծ մասամբ կաթոլիկացած են, ուր տուն մը վարձուած է մատուռի համար և ամեն կիրակի պատարագ կընեն։ Եթէ այսպէս մնայ, մանաւանդ հայը քիչ մ'ալ թանգի, այսպիսեաց թիւը շատ պիտի աւելնայ»։

—

Թիֆլիս-Կարսի երկաթուղու ապրանքատար գնացքներն այժմ երթևեկում են կանոնաւոր կերպով Նաթլուղ կայարանի և Ալեքսանդրոպոլ դաւառի Համամլի կայարանի մինչև։ Երկաթուղային բանուորները, որոնք այդ գնացքներով երթևեկում են, յաճախ ստիպված են լինում բաց, անծածկ պլատֆորմների վրա նստել և ենթարկվել ցրտի։ Անյարմար է բանուորների համար և գնացքների երթևեկութեան ժամանակը։ Թիֆլիս եկող գնացքները ճանապարհ են դալիս գիշերները, ժամի 11-ից յետոյ, և Թիֆլիս հասնում են առաւօտեան ժամի 4-ին։ Իսկ Թիֆլիսից ճանապարհ են ընկնում առաւօտեան ժամի 5-ին։

—

Թիֆլիսի մօտ գտնվող Եաղլուջա սարահարթում մի քանի օր սրանից առաջ Սարվան գիւղի երկու հովիւներ կռուեցին միմեանց հետ և նրանցից մէկը սպանեց միւսին։ Սպանողը փախաւ և ինչպէս ասում են՝ միացել է աւազակային խմբին։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում մի խումբ կանանց մէջ միտք է ծագել տանել տիկին Սաթենիկ Զմչկեանի բեմական գործունէութեան 35 ամեակը։

—

Ստացանք «Մեղուներ» վերնագրով մի նոր գրքոյկ, թարգմանութիւն ռուսերէնից։ Դա՝ յայտնի ամերիկացի մեղուաբոյծ Լ. Լանգստրոտի աշխատութիւնն է, որ հասկանալի և ժողովրդականացրած ձեով բացատրում է մեղուների կեանքը և սովորեցնում է, թէ ինչպէս պէտք է պարապել մեղուաբուծութեամբ։ Հայերէն թարգմանութիւնը կատարված է պարզ և հասկանալի և յարմարեցրած ժողովրդական ընթերցանութեան։ Գինը՝ 15 կոպէկ։

—

Մեզ հաղորդում են, որ Բօրչալուի դաւառի մի քանի գիւղեր մնացել են առանց հայի պաշարի, չնորհիւ այն սաստիկ կարկուտի, որ եկաւ հասկերի հասած միջոցին։ Կարկուտից կատարելապէս ոչնչացան Կասումլի, Բայթարափլի, Աղամամեղլի և Բայթալու գիւղերի ցանքերը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵԼՔ ԵՒ ԼԵՄԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԳԻՒՏԵՐԸ

—

Վանից մեզ գրում են Նոյեմբերի 12-ից. «Հնախոյզ դերմանացիք 100-ի չափ մշակներ կը բանեցնեն ի Թօփրաք-Գալէ, ուր մինչև հիմա գտնված են 3 հատ կարասներ, որոնք 300 քաշէն (3 քաշը=1 ֆունտի) աւելի հեղանիւթ կըբնան պարունակել. միոյն վրա տող մը բեռադիր կայ։ Գտնված են նաև նետի և նիզակի կոտրներ, մետաղեայ կապարճ մը, թրծուն կաւէ կենդանակերպ 2 կուռքեր, և մէկ կանգուն նաչափ բարակ արծաթեայ գաւազան մը՝ ոսկի ծայրով։ Ցառաջիկայ գարնան ալ Հայկայ բերդը պիտի փորեն։ Զըմզրմ-Մաղարայի մեծ այրը պեղելով, անոր բուն ձեր երևան հանած են, որ 22 քայլ երկայնութիւն, 11 քայլ լայնութիւն և 3 կանգուն բարձրութիւն ունի, պատերուն ներքև շուրջանակի քարաթումբերով, ուր կիջնուի 60 քարէ աստիճաններէ, հոն մարդկային կմախքէ մ'իզատ ոչինչ չը գտան թէև, բայց անոր խկութիւնը երևան գալը քիչ շահեկան չէ, որ առաջ շատ աննշան խոռոչ մը կերևար։ Զարխիֆէլէկի մօտերն ալ մի քիչ փորելէն վերջ, ձեռնթափ եղան ապառաժներու պատճառաւ դժուարութեանց բաղխելով։ Մեծ չէնքին յատակագիծը, զոր ասկէ 20 տարի առաջ անգլիացի պ. Բէսըմ փորել տուաւ, այժմ փորուելով աւելի ի յայտ եկած է ճերմակ և կապոյտ քարերէ պատերով, որոնց մեծութիւնը 3 ոտքէն աւելի բառակուսի ձևով։ Լէդբայ Ամենափրկիչ ապառաժին գլուխն ալ փորելով խորխորատ մը դուած են, որ դարձեալ քարէ աստիճաններով վար կիջնուի, որ լի է մարդկանց ոսկորներով։ Այս տեղ մեր հին Հարալէզք կուռքերուն տեղն ըլլալ կաւանդուի. Կարմրորայ ներքև եղած աւերակն ալ քիչ մը փորեցին, բայց ոչինչ չը գտան, բացի բեռեադրով կարասի փշրուած կտորներէ»։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, Նոյեմբերի 6-ին

Եգիպտոս հրատարակվող «Courrier d'Orient»-ի վերջին թերթին մէջ՝ տեսնուած է մայրաքաղաքիս ուղղեալ հետեւեալ թղթակցութիւնը, որ իսկապէս հետաքրքրական է իր զանազան հանգամանքներովը.

«Կ. Պօլիս՝ որ տակաւին արցունք կը թափէ—կը գրէ յիշեալ թերթի թղթակիցը—իւր կայսերական հիւրերուն բաժանման վրայ, երկու տարիէն վերջը զանոնք իրենց զաւակներովն հանդերձ վերստին տեսնելու բարեբախտութիւնը պիտի ունենայ։ Վիլհէլմ II հաստատ կերպով խօսք տուաւ իր բարեկամ ու դաշնակից Արդիւլ-Համիդի՝ թէ 1900-ին դարձեալ պիտի դայ՝ ապահով լինելու համար, թէ օսմանեան պետութեան լայնածաւալ երկիրներուն մնացած մասին մէջ ամեն բան յաջող կերթայ, և թէ, իր հիմնած աղբիւրը՝ քաղցր ու առատ ջուր կուտայ ժողովրդեան։ Այս խօսքերուն վրայ երկու վեհապետները եղբայրաբար իրարու ձեռք սեղմեցին, և, ժողովրդեան պէս, երկուքն ալ յորդ արցունք թափեցին, մէկը ցաւելով իր տուած բաղմաթիւ ընծաներուն վրայ, իսկ միւսը վշտանալով՝ աւելին ստացած չլինելուն վրայ։

«Կայսեր տրուած ընծաներուն մէջ՝ հիանալի և նմանը չի տեսնուած զորդ մը կայ, մետաքսեայ և ոսկեթել՝ գոպելէն (Gobelin) տեսակէն, որուն վրայ երփներանգ կերպարանքներ բանուած են։ Այս հրաշակերտը՝ քառասուն մէտր երկայնութիւն և քսան մէտր լայնութիւն ունի և 940 քիլօկրամ կը կշռէ։ Տասներկու բեռնակիր կարող չեղան այդ գորգը գործարանէն դուրս հանել, այլ՝ կայսրը, երբ Հէրէքէի գործարանը գնաց՝ այն տեղ դեռևի վրայ տարածեցին։ Այս գորգը մէկ քանի հարիւր հազարաւոր ֆրանգներ կ'արժէ։ Ցիշեալ գործարանի ոստայնանկուհիներէն երեք ժանկամարդ աղջիկներ կայսերական ամուլին նուիրեցին, այս եղանակին մէջ հազուադիւտ, թարմ ծաղկեփունջեր, և անշուշտ այդ գործաւորուհիներն, ի փոխարէն՝ ստացան երեսուն ֆրանգնոց մէկ-մէկ գնդասեղ (broche)։ Խեղճ աղջիկներն, ի հարկէ, յիսուն ֆրանգէ աւելի ծախք ըրած էին՝ այդ թարմ ծաղիկները ձեռք բերելու համար։ Այն բեռնակիրներն, որ վերոյիշեալ գորգը դեռևի վրայ փռելու համար այնքան նեղութիւն քաշեցին՝ տակաւին պաքշիշ (նուէր) կըսպասեն։

«Երբ Նոյին կայսերական վեհափառութիւնները Պէրայի գերմանական դեսպանատունը վերադարձան Հէրէքէի գործարանին բեռնակիրներէն մէկը երկու փասեան ընծայ բերաւ անոնց։ Այդ բեռնակիրը, իր յուսացածէն աւելի, չորս մէջիտիէով (6 ռուբլի) վարձատրուեցաւ, մինչդեռ, իր խօսքին նայելով, երեք օր՝ դեռևին տակերը մտնելով հազիւ յաջողեր էր զարնել։

«Ուրիշ երկու ժանկամարդ աղջիկներ Նոյին վեհափառութեանց հազուադիւտ ծաղկեփունջեր նուիրեցին և խոստում ստացան՝ որ երբ ամուսնանան օժիտնին պիտի տրուի իրենց։ Երբ այս բանն իմացուեցաւ՝ անմիջապէս ամուսնութեան խնդրեցին զանոնք՝ տասներկուքի չափ երիտասարդներ՝ որոյմէ հինգը պայման առաջարկեր էին՝ թէ տրուելիք օժիտը քանի մը հարիւր ոսկիէ պակաս չը լինի՝ և դումարն ամբողջովին յանձնուի իրենց ձեռքը՝ ճիշդ նշանուած օրերնին.—Արեւելքցիք ալ, դերմանացիներուն պէս, դրական մարդիկ են—վեհափառ կայսրուհին ի հարկէ պիտի չը ժառնայ այդ բանը, և, երբ Բեռլին վերադառնայ, անշուշտ իր օգոստափառ ամուսնոյն միտքը պիտի ձգէ յիշեալ խեղճերուն ըրած խոստումը։

«Վիլհէլմ, այս կրկին ուղևորութեան մէջ ի Թուրքիա, ինքը միլիոն ֆրանգի արժողութեամբ նուէր ստացած է սուլթանէն։ Այն օրն՝ երբ նորին վեհափառութիւնը Ստամբօլի և Էյուպի կողմերն անցաւ, փողոցներուն վատութիւնը տեսնելով՝ արաբ նժոյգի մը վրա հեծած էր։ Կենդանին հանդարտ չի գնալով՝ Վիլհէլմ կանգ առաւ նստարաւաճառի մը խանութին առջև, և, քանի մը կտոր շաքար ուղելով՝ իր ձեռքովը ձիուն կերցուց։ Անվարձ չի թողելու հաւար նպարավաճառը՝ ձեռքը զրպանը խօթելով մէկ ֆրանգնոց մը հանեց, բայց տեսաւ որ քիչ մը շատ էր, ուստի՝ փոխելով, 50 սանտիմնոց մը տուաւ՝ զոր նպարավաճառը խորին խոնարհութիւնով ընդունեց—ես անձամբ ներկայ էի։

«Օսման անունով բարեկամս, նախընթաց օրը տխուր դէմքով մը կ'ըսէր ինձ.—«Եթէ Թուրքիոյ բարեկամ վեհապետի մը խելքին փչէր և այսպէս դէպի Արեւելք այցելութեան ելնէր՝ շատ դժուարութիւն պիտի կրէր ձեռքը ինկանծն առնել տանելու, զոնէ Գերմ-Գաբուլի կայսերական գանձարանը չը պիտի կողոպտէր։ Վիլհէլմ, իր առաջին ուղևորութեան առնը, լաւ մը դիտեր էր, որ յիշեալ գանձարանին մէջ ոսկեձոյլ հիանալի թիկնաթոռ մը կայ, հիմա, կը վախնամ, որ մի գուցէ օգոստափառ սուլթանն՝ իր առատաձեռնութեան վարկեանններուն մէջ, որ սովորական են իրեն, ելնէ իր կայսերական բարեկամին ընծայէ այդ չնաշխարհիկ թիկնաթոռը։ Ո՞վ գիտէ թէ Գերմանիոյ այդ բախտաւոր կայսրը՝ երբ երրորդ անգամ այցելէ՝ չառնի չի տանի իրեն հետ այդ աթոռը։» Ես ապահովեցի Օսմանին՝ բացատրելով, որ ն. կ. վեհափառութիւն՝ սուլթանը, բնաւ չի յօժարիր ձեռքէ հանել այնպիսի առարկայ մը, որ ազգին սեփականութիւնն է՝ մանաւանդ այնպիսի կարասի մը, որ կայսերական գանձուն ցանկին մէջ նշանակուած է։ Ասոր վրայ, բարեկամս, որ պետական պաշտօնեայ մ' է՝ զոր քսան տարիէ իվեր կը ճանչնամ և Եւրոպա ալ այցելած է, ըսաւ ինձ—«Ինչու՞ համար Վիլհէլմ Բ., որ բազմիցս կ'այցելէ Իտալիա և Աւստրիա, այս տեղի պէս առատ հունձք չի փնտռէր այն կողմերն ալ։ Վենետիկի մէջ Ֆլօրանսի դուքսին և Բիրինալ պալատն մնացած արծաթեղէններ և դեղեցիկ պատկերներ միթէ պակաս են. բայց կ'երևի թէ՝ աւստրիացիներն ու իտալիացիները, հանդէպ իրենց օգոստափառ բարեկամին, աւելի զգուշութիւն ցոյց կուտան քան թէ մենք՝ Թուրքերս, մանաւանդ մեր սուլթանը։ Պատասխանեցի՝ թէ Աւստրիոյ՝ և զլխաւորաբար՝ Իտալիոյ պալատին մէջ ժպիտներն ու ազնիւ խօսքերը միայն դրամի տեղ կը բռնեն, անոր համար, սիրելիս, կամ-կարասի փոխադրող բեռնակիրներու թիւն ու անոնց վարձքը շատ նուազ են, և յետոյ՝ Աւստրիա, մանաւանդ Իտալիա՝ այս տեղի պէս չեն. հոն, բեռնակիրներն՝ իրենց աշխատութեան սակագինը պահանջելու եղանակը լաւ դիտեն՝ եթէ լաւ կերպով չի վճարուի իրենց։

«Հայդար-փաշայի երկաթուղեայ գործակալները, ամենքն ալ հագուած շքուած էին՝ երբ կայսրն ու կայսրուհին Հէրէքէի գործարանն այցելեցին։ Նոյին վեհափառութիւնները չորս հարիւր ֆրանգի դումար մը թողուցին անոնց՝ որոնց՝ այդ հաշուով, իրաքանչիւրին տասներկուքական ֆրանգ պիտի իյնայ, հետևաբար, այդ մարդիկը կը սպասեն երրորդ այցելութեան մը՝ որպէս զի քիչ մը սիրաշահուին։

«Սուլթանը լրագիրներու միջոցաւ յայտարարել տուաւ՝ թէ Վիլհէլմ կայսեր կողմէն եղած զանազան նուէրները պիտի բաշխուին մայրաքաղաքիս աղքատներուն։ Դժբաղդաբար այդ խեղճերուն ձեռքը մինչև հիմա ոտակ մ'անգամ անցած չը լինելով, պատճառը կը վերագրեն բաշխող պաշտօնեաներուն «ծանրագէս զրաղած լինելուն»։ Միւս կողմանէ դերմանական հիւպատոսարանն ալ մայրաքաղաքիս քաղաքական ու զինուորական պաշտօնականներու տրուած պատուանշաններն իրենց տէրերուն յանձնելու վրայ է, իսկ դեսպանատան բարեկամներն ալ կը յանձնարարեն բոլոր լրագրաց թղթակիցներուն որ ձեռքերնէն եկածին չափ գովեն Նոյին վեհափառութիւններն և մանաւանդ անոնց անսպառ առատաձեռնութեան վրայ խօսին։

—Ես—կը յաւելու թղթակիցը—բնաւ չեմ կարող որոշ կերպով գնահատութիւն մ' ընել, այլ բաւական կը համարեմ պատմել միայն տեսածս ու լսածս—կայսերական հիւրերուն համար թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու մէջ վատնուած դումարը մինչև 175,000,000 դ.—ի՝ այսինքն, 1,950,000 օսմ. ոսկւոյ (22,000,000 ռուբլի) կը հանեն, համեստ դումար մ'է այս՝ որուն մէջ չեն հաշուած տրուած նուէրները։ Հետևաբար, ինչպէս կը տեսնուի, Նոյին վեհափառութիւնները բնաւ ցաւելու պատճառ մը չունին։ Պանտրմայէն Սրվաղ (Սեբաստիա) և Սրվաղէն Պանտրմա երկաթուղիներ չինելու և Հայդարփաշայի ու Դէդէ-Աղաճի նաւահանգիստներն ապահովելու համար քարափներ հաստատելու արտօնութիւն տրուեցաւ Վիլհէլմ II-ի։ Եթէ ճշմարիտ է այս, ինչպէս կը հաւատեն, քիչ ժամանակուան մէջ ասիական Թուրքիան կատարեալ դերմանական աշխարհ մը պիտի դառնայ, և այս կերպով՝ դերման կայսրն իր ուղևորութեան յաղթութեանց վնասուն տեղն առատօրէն պիտի լեցնէ։

«Վիլհէլմ կայսրն, որ պարապ ձեռքով եկաւ, իր թղթապանակն արտօնագրելով լի, պիտի վերադառնայ յետ, հարիւրաւոր սնդուկներու՝ որոնք ընծաներով լեցուած, իրմէ առաջ Բեռլին հասան ճիշդ այն պահուն, յորում Ռուսիա, Ֆրանսիա, Անգղիա և Իտալիա՝ թուրք զօրքերը Կրետէէն հանելու գործին վրայ կը հսկէին։

«Թղթակցութիւնս փակելու համար՝ սա ալ պատմեմ։

«Խեղճ կին մը՝ որուն զաւակը Բէյրութի զերմանական հիւպատոսարանին մէջ իբրև դպրասի օգնական կը ծառայէ, լրջօրէն հարցուց ինձ թէ՝ «Իրաւ է որ Վիլհէլմ կայսրը իբրև սուլթան պիտի դայ Պօլիս և Աբդիւլ-Համիդն ալ անոր մեծ-եղբարդուսը պիտի լինի (!!!), եթէ իրաւէ այս—աւելցուց կինը—չատ գէշ բան կը լինի, մանաւանդ այնպիսի առեն մը՝ ուր սուլթանը հազիւ պիտի կրնար ինքզինքը քիչ մը ցոյց տալ ժողովրդեան. ինչպէս պիտի կրնայ զմեզ թողուլ»։

Գիրուկ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կրետական ժողովուրդը վճռեց իւրաքանչիւր տարի տօնել մի օր, որը կանուանվի «Elentheria», այսինքն ազատութեան տօն, ի յիշատակ Կրետէի ազատութեան թիւրքայ լուծից։ Այդ տօնախմբութիւնը տեղի կունենայ առաջին անգամ այն օրը, երբ արքայորդի Գէօրգի կը մտնի Կրետէ։

—Կրետէի ազգաբնակութիւնը մեծ հանդիսով ճանապարհ դրեց այն զօրաբաժինները, որոնք վերադառնում են հայրենիք, որովհետև եւրոպական զօրքերի թիւը պէտք է կրճատվի այժմ Կրետէում։ Տները զարդարվեցին օտար պետութիւնների դրօշակներով, որոնք ծածանվում էին յունաց և կրետական դրօշակների հետ միասին։ Կանայք ծաղիկներ էին փռում այն փողոցներում, որոնցով պէտք է անցնէին զինուորները և ամբոխը ողջունում էր զօրաբաժիններին, կամենալով դրանով կրին անգամ իր շնորհակալութիւնը յայտնել պետութիւններին։

—«Standard» լրագրի խօսքով, երկու շաբաթից յետոյ Կրետէ կերթայ Նումա Դրօզ, որպէս օգնական արքայորդի Գէօրգիի։

—Բերլինից լրագիրներին հեռագրում են հետեւեալը. «Լուր է պարում, որ զինուորական նոր օրինագիծը, որը պէտք է առաջարկվի Ռէյխստագին, պահանջում է զօրքի վրա ծախսվող դումարի վրա 16 միլիոն աւելացնել իւրաքանչիւր տարի։

—Բիսմարկի յիշատակարանները լոյս տեսան 100 հազար օրինակներով և չը լված արագութեամբ ծախվեցին։

—«Tageblatt» հաղորդում է, որ Վիլհէլմ կայսրը դիտաւորութիւն ունի մի գիրք հրատարակել Պալեստինայում իր արած ճանապարհորդութեան մասին։

—Կ. Պօլսից հաղորդում են, որ թիւրքայ մինիստրութեան անդամներից շատերը ներկայացրել են սուլթանին մի յիշատակագիր, որի մէջ նրա ուշադրութիւնն են հրաւիրում երկրի խառնակ դրութեան վրա և ցոյց են տալիս ռէֆորմներ մտցնելու անհրաժեշտութիւնը։ Բոլոր մինիստրները համաձայն են, որ վերանորոգութիւնները հարկաւոր են, բայց սուլթանը համաձայն չէ այդ կարծիքի հետ և շատ դժգոհ է մինիստրների այդ վարմունքից, այնպէս որ մինիստրական փոփոխութիւն կարող է առաջ դալ։

—Լոնդոնից հեռագրում են, որ Պիկարի գործը լուրջ կերպով դրաղեցնում է անդլիական մամուլը։ «Times» հաւատացած է, որ Պիկարին կարդարացնեն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լուկկէնի, աւստրիական կայսրուհուն սպանողը, «Tribune de Jenève» լրագրի խօսքով, արդէն բերված է այն բանտը, որտեղից նա այլևս չէ դուրս դալու։

Լուկկէնի քաղցը քնած էր, երբ նրան զարթեցրին երեկոյեան 11 ժամին և հրամայեցին նրան հագնվել։

—Այնտեղ գնալու համար,—հարցրեց նա։

—Այո։

—Ես պատրաստ եմ։ Ինձ համար միևնոյն է։

Լուկկէնիին ապա տարան բանտի վերակացու Լաֆօնի առանձնասենեակը, որը կարճ խօսքերով բացատրեց նրան տաժանակիր բանտի մէջ տիրող կեանքի եղանակը, և հաղորդեց նրան, որ տարեկան չորս անգամ նրան թոյլ կը տրվի տեսնվել մի քանի րօպէով իր բարեկամների հետ և իրաքանչիւր շաբաթ նրան կայցելի կաթոլիկ քահանայ Գլամմար։

—Նա շատ լաւ քահանայ է, մարդասէր և բարի, ասաց նրան վերակացուն։ Դուք ինչ կարծիք էլ ուղենաք, կարող էք ունենալ կրօնի մասին, բայց, յամենայն դէպս, նա ձեզ համար բարեկամ և խորհրդատու կը լինի։

Լուկկէնի ոչինչ չը պատասխանեց։ Նրան յանձնեցին հինգ ժանդարմներին։ Առաջնից գնում էին երկու զինուորներ լապտերները ձեռքներին։ Մի քանի րօպէից յետոյ Լուկկէնիին բերին այն շինութեան դռան առաջ, ուր նա պէտք է մնայ մինչև իր մահը։ Դռների մօտ նա սկսեց իր շուրջը

ջը նայել, կարծես թէ մի տեղից օգնութեան էր սպասում և ապա, ուսերը թօթվելով, համարձակ քայլերով անցաւ չէվքից վերջին անգամ իր կեանքում։ Բանտի դիրեկտորն արդէն սպասում էր նրան։ Լուկկէնի իսկոյն հագաւ տաժանակիր բանտարկեալի հագուստը և զինուորները տարան նրան № 95 խուցը։ Մանր դուռը փակվեց նրա ետևից։ Վեց ամիս շարունակ Լուկկէնի կատարելագործ առանձնացրած կը լինի և կաշխատի իր խուցում։ Եթէ իրան լաւ կը պահի, նրան յետոյ կը տանեն արհեստանոցը։ Այժմ Լուկկէնի ապրում է աշխարհում № 1144 անունով և նրա անունը ջնջված է կենդանի մարդկանց ցուցակից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 Նոյեմբերի։ Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ և Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնա Օդոստափառ երեխաների հետ Կրիմից վերադարձան Պետերբուրգ։

Կ. ՊՕԼԻՍ, 21 Նոյեմբերի։ Չորս դեսպանութիւնների թարգմանները մի գրութիւն յանձնեցին Բ. Դրան, որով յայտարարում են թէ յունաց արքայորդի Գէօրգի նշանակվում է Կրետէի ծայրագոյն կօմիսար։ Այդ յայտարարութեան կցված է մի յայտագիր, որի մէջ ասված է թէ չորս պետութիւնները կը պաշտպանեն կղզու վրա օսմանեան պետութեան բանկի շահերը։

ԿԱՆԷՑԱ, 21 Նոյեմբերի։ Ակրոտիրիի և Հալէպպօի ապստամբները հանդիսաւոր կերպով մտան քաղաք՝ զինադադար լինելու համար։ Աղգաբնակութիւնը ի պատիւ ապստամբների սիրալիր ցոյցեր արաւ։ Դիմաւորման ժամանակ ներկայ էին ծովապետները և հիւպատոսները։

ՎԻԵՆՆԱ, 21 Նոյեմբերի։ Լրագրիներում տրված են յօդուածներ, նուիրված կայսերական յօբելեանին. մի և նոյն ժամանակ բոլոր կուսակցութիւնների լրագրները գովաբանում են կայսրին, որպէս եւրօպական խաղաղութեան պահապանին, միապետին, որը ամբողջապէս նուիրված է իր պարտքը կատարելու գործին։ Օրը սկսվեց թնդանօթաձգութեամբ։ Քաղաքը զարդարված է։ Ժողովրդի մեծ բազմութիւն սև և դեղին ժապաւէններով խռնվում է փողոցներում։

ԼՕՆԴՕՆ, 22 Նոյեմբերի։ Առևարի մինիստր Բիտչի Կրոյդոնում մի ճառ արտասանեց, որի մէջ ասաց, թէ երկիրն աւելի մօտ էր պատերազմին, քան թէ կարծում էին շատերը, բայց եթէ ոչ ոք երկիւղ չէր զգում, դրա պատճառն այն էր, որ երկիրը հաւատում է ազգային պաշտպանութեան միջոցների ոյժին։

Արտաքին գործերի մինիստրի նախկին օգնական Գրէյ մի ճառ արտասանեց Բլէկվէրնում, որի մէջ այն միտքը յայտնեց, թէ կառավարութիւնը երկրի վստահութիւնը ձեռք բերեց Անգլիայի և Գերմանիայի միջև այժմ գոյութիւն ունեցող առաջվանից աւելի լիակատար համաձայնութեան պատճառով։ Ինչու,—հարցրեց ապա հռետորը, փորձ չեն անում Չինաստանի վերաբերմամբ համաձայնութիւն կայացնել Ռուսաստանի հետ։ Չինական հարցը ամենագժուար հարցերից մէկն է թէ Անգլիայի և թէ ուրիշ երկրների համար։ Ասիայի համար էապէս անհրաժեշտ է, որ անգլիական և ռուսաց կառավարութիւնների մէջ համաձայնութիւն կայանայ։ Հռետորը կարծում է, որ ռուսաց կառավարութիւնը բարեխղճաբար հոգ է տանում խաղաղութեան մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 Նոյեմբերի։ Հակամանտախտային յանձնաժողովից. «Անցօրում մինչև նոյեմբերի 18-ը նոր հիւանդացողներ չեղան. այժմ հիւանդներ չը կան։ Մնացած տեղերում ամեն բան բարեյաջող է»։

ԳՐՕԶՆԻ, 23 Նոյեմբերի։ Ախվէրդովի նաւթահանքերում այրվում են նաւթային հինգ վիշկաներ և լիճը։

ՐԻԳԱ, 23 Նոյեմբերի։ Այստեղ ժամանեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրը։

ՊԱՐԻԶ, 23 Նոյեմբերի։ Լուրջ բնաւորութիւն ունէր այն ժողովը, որ գումարվել էր խօսելու յօգուտ Դրէյֆուսի գործի վերաքննութեան և բողոքելու Պիկարին հալածելու դէմ։ Նախագահում էր ինստիտուտի անդամ Դիւկլո։ Հռետորների թւում կային՝ Անատոլ Ֆրանս, Պոլ Բէկիլ, Բիւիսսոն, Ըէյնակ։ Բոլոր հռետորները բողոքում էին զինուորական դատարանի դէմ և գովաբանում էին Պիկարին, որը, նրանց խօսքով, շատ կարելի է կը դատապարտվի, բայց դատավճիռը ի կատար չի ածվի, որովհետև նրա երկրպագուները կը կարողանան արգելել մի այդպիսի օրինազանցութիւն։» Ալէման յայտնեց, որ Կավէնեակի կուսակցութեան մէջ տեսնում է նոր բուլանժիզմ, որը պատրաստվում է խեղդել հանրապետութիւնը։ Պրոֆէսսոր Լանդլուա ասաց, որ այն դէպքում, եթէ Պիկար դատապարտվի, ժողովուրդը կը կարողանայ դուրս կորզել նրան զինուորական դատարանի ճանկերից։ Ժողովուրդը ողորմութեամբ քուէարկեց հերթական գործերին անցնելու բանաձևը, որի մէջ զարմանքի զգացմունք է յայտնվում դէպի Պիկար։ Միտինգից յետոյ, մօտ հազար մարդիկ ցոյց արեցին «Libre Parole» լրագրի խմբագրատան առջև, «Կեցցէ Պիկար» աղաղակներով։ Մի քանի հակացոյցերից և կռիւներից յետոյ, պօլիցիան ցրվեց ամբոխը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍ, տ. Բարբառէ Ներսէսեանցին. Պարսկաստանի Նիշաբուր քաղաքից, Գ. Շահնազարեանից, ստացանք 17 ռուբլի՝ ձեզ յանձնելու համար։ Մտէք խմբագրատուն՝ այդ փողն ըստանալու։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին։

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 7 ժամին։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ՝ 30 րոպէին. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 30 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բագու է հասնում ցերեկվայ 12 ժամ՝ 59 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ՝ 55 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բագու է հասնում առաւօտեան 5 ժամ 42 րոպէին։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է ժողովրդական նիւթեր հաւաքողներին, որ Ընկերութիւնս այսուհետև հրատարակելու է միայն այնպիսի ժողովրդական նիւթեր, որոնք բաւականաչափ մշակված են և առանձին խմբագրութեան կարօտ չեն։ 1—3

Վրաստանի եւ Իմերէթի
ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՑԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ ԱՏԵՆԻ ՄԷՋ նշանակված է ածուրդ սոյն նոյեմբերի 27-ին առանց կրկնաձրդի՝ կապալով տալու եկեղեցական կղզին, որ գտնվում է Վանաց աւագ եկեղեցւոյ հանդէպ։ Մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն սահմանեալ գրաւական, իսկ պայմանների հետ կարող են ծանօթանալ կօնսիստորիայի դիւանատանը։

Անդամ կօնսիստորիայի՝
1—3 Գրիգոր աւագ քահ. Տէր-Բարսղեանց

Լոյս տեսաւ և ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում և գաւառական այլ գրավաճառների մօտ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆՑԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Գրեց ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆ
Գինն է 1 ռուբլի։
(ե. ո.) 2—10

ЖЕНЩИНА-ВРАЧЪ
В. І. АНТУШЕВИЧЪ
Практикуетъ въ г. Елисаветполѣ. Пріемъ больныхъ ежедневно отъ 10 до 12 часовъ дня. Набережная рѣчки Ганжинки, д. Ерицпохова, рядомъ съ домомъ Директора гимназіи.
(п. е. հ.) 3—10

Լոյս տեսաւ ՄԵՐ ԿԱԶՄԱԾ
1899 Թ. ՊԱՏԻ, ԾՈՑԻ ԵՒ ՍԵՂԱՆԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
ՀԵՐՈՒՍՏ ՑԱՒԵԼՈՒԹԱՎ ԵՒ ԵՐԱԶՇՀԱՆՈՎ
Ցանկացողները թող շտապեն մեզ յայտնելու, որպէս զի ժամանակին կարողանանք հասցնել։
Թիֆլիս՝ Մակար Զմշկեան
(ե. չ.) 15—20

1870 թ. մարտի 27-ին ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված
Առեւտրական-Ապահովագրական Ընկերութիւնը
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
Ապահովագրութիւն՝ կրակից—ամեն տեսակ շարժական և անշարժ ստացուածքների։ ապրանքներ տեղ հասցնելու—գետերի, ծովերի վրայով և ցամաքային ճանապարհով։
Ապահովագրութիւն՝ կեանքի, դրամագլուխների և եկամուտների։ Կանոնները, պայմանները, գրաւոր և բերանացի բացատրութիւնները կարելի է ստանալ Թիֆլիսում գլխաւոր գործակալ Ֆէօդոր Ալէքսանդրովիչ Իվանովի գրասենեակում, Սօլոլակ, Սադովայա փողոց, տուն № 64, Տելեֆոն № 345, Նահանգական վերատեսուչ Վիտալի Դիոնիսովիչ Անդրժէյկովիչի, Վօլկոնսկայա փողոց, տուն № 16 և Ընկերութեան Վարչութեան մէջ Մոսկվայում, Նիկոլսկայա, տուն Բոստանժօղլո, ինչպէս նաև Ընկերութեան գործակալների մօտ ռուսաց կայսրութեան քաղաքներում։ (ե. հ. չ.) 1—10

ՕԳՈՒՏ ՔԱՂԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ ԳՆԵՑԷՔ
ՕԲՈՐՈՏ
ԽԱՆՈՒԹԻՑ

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	արծաթեայ անկէր,	84 պրօբ.	6 ր. 80 կօպ.	մինչև 28 ր.
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	տղամարդկանց համար, ոսկէ,	56 պր.	35 ր.	,, 105 ,,
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	կանանց համար, ոսկէ,	56 պր.	18 ,,	,, 40 ,,
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	օքսիդացրած . . .		3 ,,	,, 18 ,,
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	նիկէլից շինած . . .		1 ,, 65 կ.	,, 7 ,,
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	շաբաթը մի անգամ լարվող .		10 ,,	,, 14 ,,
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	զարթեցուցիչ . . .		1 ,, 70	,, 3 ր. 50 կ.
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	երաժշտութեամբ . . .		5 ,, 25	,, 6 ր.
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	ամերիկական նոր ոսկուց (դիանա) և նոյն մետաղից շղթայ. . .		9 ,,	,, 11 ր.
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ՝	կանանց համար, նոյն մետաղից շղթայով			11 ր.

Կան նաև մեծ քանակութեամբ օպտիքական ապրանքներ, այն է՝ ակնոցներ, նիկէլից, կըբեայի ոսկրից, եղջիւրից, ցելիւլօիդի պենսնէ, հեռադիտակներ, լօրնէտներ։ Ցատուկ ընտրովի ակնոցներ և պենսնէ՝ լաւ զարդարված նիկէլից և լաւ ապակիներով, ինչպէս հեռատեսների, այնպէս էլ կարճատեսների համար, ՄԻՄԻԱՑՆ 1 ՐՈՒԲԼԻ։

Ակնոցներ կամ պենսնէ առնողը ստանում է նաև մի զոյգ՝ ապակի ուղած համարով

ՁՐԻ
ՆՈՐՈՒԹԻՒՆ!

Ակնոցներ, պենսնէ՝ զանազան ձևի, իսկական ԴՈՒԲԼԷՑ, 14 կարատ, Պարիզի չէնք, երբէք չը խաւարվող, լիակատար ապահովութիւն արտասահմանեան գործարանատէրերի, միայն 4 ր. 50 կ.
ՕՏԱՐ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ առաջին իսկ պօստով։ ТИФЛИСЪ, Дворцовая, домъ Каламкарова Д. Казаковъ.
(ե. ո. չ.) 2—3

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբաչխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առևտրական թուաբանութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Գեղագրութիւն և ամենաւատ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքներն սկսվելու են 1899 թվի յունվարի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդդեկէլի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ (ե.) 3—20

ՆՈՐ ԲԱՑՎԵՑ
Կ. ՂՈՒԼԻՔԱՆԵԱՆԻ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԵՒ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
(ե. հ. չ.) Սադովայա փողոց, № 38, միջին յարկ։ 4—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՑԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 25 Նոյեմբերի (7 դեկտեմբերի) ՄԻՆԴՐԷԼԻ՝ չոգենաւը, նաւապետ ՇԵԼՏ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կոլիւբեակինսկայա հրապարակ։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հերշենզօնին։ (ե. հ. չ.) 4—20

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Ноября 1898 г.

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Меник. ул. № 13.